Մեդիա և տեղեկատվական գրագիտությունը նախադպրոցական կրթության մեջ

ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՁԵՌՆԱՐԿ

Ծրագրի ղեկավար՝

Սեդա Մուրադյան

Գործընկեր կառույց՝

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

Ձեռնարկի հեղինակներ՝

Աիդա Խալաթյան

Մարինե Մկրտչյան

Աշխեն Գյուրջյան

Փորձաքննող՝

ԿՁՆԱԿ հիմնադրամի Ուսումնական բնագավառների

մշակման և զարգացման բաժնի մասնագետ

Աննա Ամիրջանյան

Համակարգչային ձևավորում՝

Հասմիկ Մուրադյան

Հանրային
լրագրության ակումբ
«Քայլ առ քայլ» ԲՀ
Երևան 2023

Ձեռնարկը մշակվել է Հանրային լրագրության ակումբի «Մեդիա և տեղեկատվական գրագիտությունը նախադպրոցական կրթության մեջ» ծրագրի շրջանակում՝ ԱՄՆ պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակի դրամաշնորհային աջակցությամբ: Ձեռնարկում արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որը պարտադիր չէ, որ համընկնի Հանրային լրագրության ակումբի և ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

Ձեռնարկի հեղինակային իրավունքը պատկանում է Հանրային լրագրության ակումբին, գործընկեր կառույցին՝ «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ, և ձեռնարկի համահեղինակներին՝ հավասարապես:

Այլ անհատների և կազմակերպությունների կողմից ձեռնարկի տպագրությունն անթույլատրելի է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն....4

Զարգացման և կրթական վերջնարդյունքներ....5

Թեմատիկ պլանավորում....7

Թեմաներն՝ ըստ ծրագրային բաղադրիչների....8

I. Խոսքի զարգացում....9

Թեմա 1. «Ինչպես ենք լուրեր և տեղեկություններ ստանում»....9

Թեմա 2. «Երկինքը փուլ է գալիս» (Հայկական ժողովրդական հեքիաթ)....14

Թեմա 3. Տեսաֆիլմի դիտում «Երկինքը փուլ է գալիս» (Հայկական ժողովրդական հեքիաթ)....23

Թեմա 4. «Կըտ-Կըտ ճուտիկը»....26

Թեմա 5. «Խելացի Պինգվինի արկածները»....33

II. Ինձ շրջապատող աշխարհը....36

Թեմա ՝ « Մասնագիտությունը՝ լրագրող»....36

III. Խաղեր....37

Թեմա ՝ «Աղվեսի բույնը» (Հայկական ժողովրդական խաղ)....37

IV. Կերպարվեստ և կառուցողական աշխատանք....39

Թեմա՝ «Նկարում ենք ճուտիկ»....40

Հավելված 1....42

Քննադատական մտածողություն....42

Քննադատական մտածողությունը և ԽԻԿ համակարգը....43

Հավելված 2....45

Համագործակցային ուսումնառության ռազմավարություններ....45

Հավելված 3....48

Նկարներ....48

Օգտագործված գրականության ցանկ....53

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռնարկի նպատակն է՝ նպաստել մեդիագրագիտությանն առնչվող նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներով սահմանված կարողունակությունների զարգացմանը: Ձեռնարկը մշակված է ըստ նախադպրոցական կրթության ավարտին ակնկալվող կարողունակությունների, միջին և ավագ խմբերի համապատասխան վերջնարդյունքների: Նպատակն է՝ ներգրավել երեխաներին հետաքրքիր և իմաստավորված խաղային գործունեության մեջ:

Ներկայացնում ենք թվային և մեդիա կարողունակության բովանդակությունը:

Երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բավմականության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում: Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում էիրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները:

Ձեռնարկը նպատակ ունի զարգացնել մեդիագրագիտության վերաբերյալ տարրական գիտելիքները և մեդիագրագիտությանն առնչվող կարողություններն ու հմտությունները, որոնց ձևավորումը ժամանակի հրամայականն է: Ուստի այդ գործընթացին անհրաժեշտ է ձեռնամուխ լինել հենց նախադպրոցական տարիքից:

Երեխաները կիրականացնեն գործնական աշխատանքներ և կմասնակցեն մեդիայի և տեղեկատվության հետ առնչվող տարաբնույթ աշխատանքների: Կսովորեն, թե ինչպես պետք է անվտանգ օգտվել համացանցից և զգուշանալ ապատեղեկատվությունից: Իրականացվող ուսումնական աշխատանքների շնորհիվ կզարգանա երեխաների քննադատական մտածողությունը, իրավիճակները դիտարկելու և վերլուծելու, այլընտրանքային կարծիքներ քննելու, իրազեկ որոշումներ կայացնելու կարողությունները:

Ներկայացված պարապմունքները պարունակում են երևակայությունը զարգացնող նորարարական գաղափարներ: Դրանք կօգնեն մեդիագրագիտությանը նվիրված պարապմունքները կազմակերպել հետաքրքիր՝ երեխաների զարգացման համար առավել արդյունավետ, իմաստալից ձևերով:

Հուսով ենք, որ այս աշխատանքները կօգնեն երեխաներին ավելի լավ հասկանալ համացանցն ու մեդիան, ճիշտ օգտվել նրանց ընձեռած հնարավորություններից, միջոցներից: Գնահատել համացանցի և մեդիայի օգտակարությունը, խուսափել հնարավոր վտանգներից:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ստորև ընտրված և ներկայացված են նախադպրոցական տարիքի միջին և ավագ խմբի երեխաների զարգացման և կրթական այն վերջնարդյունքները, որոնց զարգացմանը կնպաստեն ձեռնարկում ընդգրկված պարապմունքները (համապատասխան հատվածները թվանշված են): Դաստիարակներին առաջարկվում է ցուցաբերել ստեղծագործական մոտեցում՝ ելնելով խմբի երեխաների կարողություններից և հետաքրքրություններից:

Շարժողական ոլորտ

Միջին խումբ

- **խաղում է շարժախաղեր՝ հիմնական շարժողական գործողություններով,** մասնակցում է մարզախաղերի տարրերով փոխանցումավազքերին՝ **դրսևորելով անհրաժեշտ շարժողական ակտիվություն,**
- **կատարում է պարզ պարային շարժումներ** և դրանց զուգակցումներ:

Ավագ խումբ

- **խաղում է տարբեր ուղղվածության շարժախաղեր** և մարզախաղեր, զուգորդում դրանց բնորոշ շարժողական գործողությունները՝ **դրսևորելով անհրաժեշտ շարժողական ընդունակություններ,**
- **կատարում է պարային շարժումներ՝ դրսևորելով ռիթմի զգացողություն** և ռիթմոպլաստիկ շարժողական կարողություն:

Խոսքի և հաղորդակցման ոլորտ

Միջին խումբ

- **երեխան ընկալում և վերարտադրում է լսած փոքրիկ պատմությունները,**
- **պատմում է սեփական փորձառության մասին,**
- **տարբերում է հաղորդակցության անմիջական և միջնորդավորված ձևերը, պատկերացնում է տեխնոլոգիաների դերը հաղորդակցության մեջ**,
- **հաղորդակցման ընթացքում ոչ միայն արտահայտում է սեփական վերաբերմունքը որևէ երևույթի նկատմամբ, այլև դրսևորում է դիմացինին լսելու կարողություն:**

Ավագ խումբ

- **մտքերն արտահայտում է տրամաբանական հաջորդականությամբ**՝ կիրառելով հոմանիշ, հականիշ բառեր,
- **երեխան** հորինում և կապակցված ներկայացնում է փոքրիկ պատմություններ, **նկարագրում և բացատրում է որևէ երևույթ,**
- **հարցեր է տալիս մեդիայում լսած բովանդակության մասին, քննարկում է դրա նպատակը:**

Իմացական ոլորտ

Միջին խումբ

- **հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում դրսևորում է իմացական ակտիվություն, երևակայություն, կարծիք հայտնելու կարողություն,**

մեծահասակների օգնությամբ կողմնորոշվում է տեղեկատվության բազմազանության մեջ և կատարում նպատակամետ ընտրություն:

Ավագ խումբ

- երեխան վերլուծում է երևույթների պատճառահետևանքային կապերը, ներկայացնում է իր պատկերացումներն ու վերաբերմունքը,
- առաջադրանքներ կատարելիս դրսևորում է ճանաչողական հետաքրքրություն և ստեղծագործականություն,
- դրսևորում է քննադատական վերաբերմունք ներկայացվող նյութի նկատմամբ, կողմնորոշվելով տեղեկատվության բազմազանության մեջ, կատարում է գրագետ ընտրություն, կատարում է հետևություններ և այդ առնչությամբ արտահայտում իր կարծիքը,
- դրսևորում է մեդիա և թվային գրագիտություն, նշում է իրական և մեդիա միջավայրերի տարբերությունները՝ մեդիայից ստացված տեղեկատվությունը համադրելով իրական կյանքին,
- մոդելավորում է առարկաները, հեքիաթի հերոսներին, բնության երևույթները պայմանական նշաններով, առանձին պատկերներով, տարբերում է ճանապարհային երթևեկության պարզ նշանները:

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ

Միջին խումբ

- դրսևորում է սեփական հույզերի ու գործողությունների, մտքերի և վերաբերմունքի մասին խոսելու պատրաստակամություն,
- տարբերակում և վերլուծում է իր ցանկություններն ու նախասիրությունները, կարողանում է ընտրել, հիմնավորել և բարձրաձայնել ընտրությունը:

Ավագ խումբ

- երեխան արտահայտում է իր հույզերն ու զգացմունքները բառերով և հաղորդակցման ոչ բառային ձևերով,
- տարբերակում և վերլուծում է իր ցանկություններն ու նախասիրությունները, կարողանում է ընտրել, հիմնավորել և բարձրաձայնել ընտրությունը:

Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ

Միջին խումբ

- գիտի առողջության պահպանման հիմնական կանոնները, տարբերակում է առողջ և անառողջ սնունդը, պատկերացնում է օգտակար և վնասակար սովորությունների հետևանքները, դրսևորում է բացասական վերաբերմունք վնասակար սովորությունների հանդեպ:

Ավագ խումբ

- երեխան դրսևորում է ինքնասպասարկման հմտություններ, ինքնուրույն պահպանում է անձնական հիգիենայի կանոնները,
- ունի տարրական գիտելիքներ վնասակար սովորությունների հետևանքների մասին,
- ունի տարրական պատկերացումներ թվային անվտանգության կանոնների մասին, գիտակցում է սեփական պատասխանատվությունը դրանց հետևելու գործում:

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ



ԹԵՄԱՆԵՐՆ՝ ԸՍՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ

I. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Թեմա 1. «Ինչպես ենք լուրեր և տեղեկություններ ստանում»:

Թեմա 2. «Երկինքը փուլ է գալիս» (Հայկական ժողովրդական հեքիաթ):

Թեմա 3. Տեսաֆիլմի դիտում «Երկինքը փուլ է գալիս» (Հայկական ժողովրդական հեքիաթ):

Թեմա 4. «Կըտ-կըտ ճուտիկը»:

Թեմա 5. «Խելացի Պինգվինի արկածները»:

II. ԻՆՁ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱՇԽԱՐՀԸ

Թեմա՝ «Մասնագիտությունը՝ լրագրող»:

III. ԽԱՂԵՐ

Թեմա՝ «Աղվեսի բույնը» (Հայկական ժողովրդական խաղ):

VI. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Թեմա՝ «Նկարում ենք ճուտիկ»:

I. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Թեմա 1. «Ինչպես ենք լուրեր և տեղեկություններ ստանում»

Գործունեության ձևերը `

1. Զրույց,
2. Նկարներով պատմումներ,
3. Խմբային աշխատանք,
4. Ինքնուրույն աշխատանք:

Նպատակը.

- Զարգացնել տրամաբանական հաջորդականությամբ մտքեր արտահայտելու կարողությունը:
- Ծանոթացնել լուրեր և տեղեկություններ ստանալու ձևերին:
- Համակարգել գիտելիքները մեդիայի մասին:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ ԽՀ – (ե), (թ), (ժ), Ի - (ա), (գ), (դ), (է), ՀՍԱ - (բ), (գ),

Թեմայի վերջնարդյունքները՝

Սանը՝

- գիտի թեմայի հետ առնչվող բառեր՝ տեղեկություն, լրատվամիջոցներ, համակարգիչ, լուրեր,
- պատկերացնում է, թե ինչպես են տարածվում լուրերը և ինչ սարքեր են օգտագործում կարդալու համար,
- ձևակերպում է հարցեր՝ մեդիայի գործիքների վերաբերյալ,
- դրսևորում է պատասխանատվություն զույգերով, փոքր խմբերով կազմակերպված քննարկումներին, արտահայտում է մտքերը և հայտնում է կարծիք,
- արտահայտում է հույզերը և նկարագրում է զգայարանների միջոցով ստացված տեղեկությունները:

Անհրաժեշտ նյութեր

1. Մկնիկի գունավոր նկարը,
2. 6 թեմատիկ գունավոր նկար,
3. Ա4 թղթեր երեխաների քանակով,
4. Գունավոր մատիտներ,
5. Մեծ պաստառ՝ 5 զգայարանների պատկերներով, որոնց վրա կփակցվեն մկնիկի նկարը և երեխաների նկարած նկարները:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները և դաստիարակը նստում են շրջանաձև: Դաստիարակը ցուցադրում է մկնիկի նկարը.

-Երեխաներ, այսօր հետաքրքրասեր մկնիկի հետ կսովորենք, թե ինչպես են մեզ հասնում լուրերը և թե որտեղ կարող են գտնվել նրանք: Կսովորենք նաև, թե ինչպես և որտեղից կարելի է շատ նորություններ իմանալ:

Խթանում

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

-Ո՞վ կարող է մեզ մի լուր ասել ու նշել, թե որտեղից է իմացել:

-Երեխաներ, ինչ գիտեք, թե որտեղից ենք մենք նորություններ/ լուրեր իմանում:

Յուրաքանչյուր հարցից հետո ժամանակ տալ մտածելու և պատասխանելու համար:

Իմաստի ընկալում

Զրույցը շարունակվում է, և դաստիարակը ներկայացնում է.

-Երբ մարդիկ հանդիպում են, ողջունում են և սկսում իրար հետ խոսել, զրուցել: Նրանք բան են պատմում, որն արդեն եղել-անցել է կամ հենց նոր է կատարվել: Իրար հարցեր են տալիս և ուշադիր լսում: Լսելիս կամ զարմանում են, կամ `տխրում ու ուրախանում: Նրանք հաճախ ասում են. «Ա՛յ քեզ լավ նորություն», կամ «Չի՛ կարող պատահել»:

Դաստիարակը հարցնում է.

- Երեխաներ, ձեր կարծիքով, ինչ են լսում մարդիկ, որ ուրախանում են:

Լսել մի քանի պատասխան, որից հետո ասել.

- Մենք նորություններ և լուրեր, կարող ենք ասել նաև տեղեկություններ, իմանում ենք ոչ միայն մարդկանցից: Լուրեր կարող ենք ստանալ, եթե նայենք հեռուստացույց, կարդանք գրքեր:

Հարց երեխաներին.

- Կարող եք ավելացնել՝ էլ որտե՞ղ ենք լուրեր լսում:

Լսել մի քանի պատասխան, որից հետո ասել.

- Որտեղ էլ լինեն լուրերը՝ գրքում, ամսագրում, համակարգչում՝ դրանք գրում է մարդը, որին ասում են **լրագրող:**

Հարց երեխաներին.

- Դուք նկատե՞լ եք, թե տանը ով է շատ լուրեր լսում և ինչի՞ օգնությամբ:

Լսել մի քանի պատասխան, որից հետո ասել.

- Լուրերը գրում են մարդիկ: Լրատվամիջոցները տարածում են, որ բոլորը լսեն, կարդան, տեսնեն ու տեղեկացված լինեն:

Այնուհետև դաստիարակը հերթով ցուցադրում է յուրաքանչյուր նկարը և ասում.

Գիրքը գրում են գրողները: Գրված մասը անվանում ենք տեքստ: Տեքստերը շատ նոր տեղեկություններ են մեզ հայտնում: Որքան շատ կարդանք, այնքան շատ բան կիմանանք:

Մարդիկ հորինել են ժամացույց, որ կարողանան հետևել ժամանակին թվերի միջոցով. քնեն ժամանակին և արթնանան ժամանակին, որ երեխաները չուշանան մանկապարտեզից, իսկ մեծերը՝ աշխատանքից:

Հեռուստացույցը իր տեղն ունի մեր ընտանիքում և բոլորը դիտում են այն: Պապիկը լուրեր է լսում, երեխաները մուլտֆիլմ են նայում, իսկ մեծերը սիրում են ֆիլմեր դիտել:

Համակարգիչը էլեկտրոնային սարք է: Այն կարող եք տեսնել դըպրոցում, խանութում, հիվանդանոցում և իհարկե՝ տանը: Համակարգչով աշխատում են, հաշվում, գրում, խաղեր են խաղում, ֆիլմ են դիտում: Երբ համակարգիչը միացնում ես հոսանքին, շարժում ես մկնիկը, կարող ես քեզ հետաքրքրող շատ բաներ իմանալ:

Ջութակը երաժշտական գործիք է: Երբ նվագում են ջութակ, ձայնի միջոցով մենք լսում են տարբեր մեղեդիներ:

Նկարել բոլորս ենք սիրում: Ներկերով նկարում ենք այն, ինչ ուզում ենք: Ցուցադրում ենք, որ շատերը տեսնեն, թե ինչ ենք նկարել ու մտածեն նկարի շուրջ:

Դաստիարակը մեծ նկարները փակցնում է սենյակի տարբեր մասերում և հանձնարարում երեխաներին մոտենալ այն նկարին, որտեղ պատկերված առարկայից իրենք ամենաշատն են օգտվում տեղեկատվություն ստանալու համար: Երեխաները մոտենում են նկարներին, կազմում են փոքր խմբեր և պատմում են միմյանց, թե ինչ են լսել կամ տեսել նկարում պատկերված տեղեկատվության աղբյուրի միջոցով:

Փոքր խմբերով գործնական աշխատանք

Դաստիարակ. «Սիրելի՛ երեխաներ, Մկնիկը խնդրում է, որ իրեն օգնենք և գտնենք տողերում «ավելորդ» նկարը»:

Տեղեկության տեսակը	Տեղեկություն հայտնելու գործիքը		
Ձայնային			
Տեքստային			
Գրաֆիկական/նկար			
Տեսաֆիլմ			
Թվային			

Ինքնուրույն աշխատանք

Երեխաներին ցուցադրել 5 զգայարանների նկարները՝ քիթ, աչք, ականջ, լեզու, ձեռք: Դաստիարակը քննարկում է երեխաների հետ, թե ինչ տեղեկություն են ստանում մարդիկ զգայարանների միջոցով, օրինակ՝ ինչ են տեսնում, լսում, զգում և այլն:

Քննարկել այնքան, մինչև երեխաները կողմնորոշվեն, թե որ զգայարանով ինչ տեղեկություն են ստանում, ապա որոշեն, թե որ զգայարանն են նկարելու:

Երեխաներից յուրաքանչյուրը ընտրում է, թե ինչ է նկարելու:

Կշռադատում

«Դեմ առ դեմ շրջաններ» մեթոդական հնարով ավարտել թեման:

Երեխաները բաժանվում են երկու խմբի, կանգնում են շրջանաձև՝ դեմ դիմաց:

Նրանք միմյանց ցույց են տալիս իրենց նկարները և պատմում, թե ինչ են նկարել և ինչու: Այնուհետև բոլոր նկարները փակցնում են պաստառին, որի վրա դաստիարակը նախապես փակցրել է 5 զգայարանների նկարները:

Թեմա 2 «Երկինքը փուլ է գալիս» (Հայկական ժողովրդական հեքիաթ):
Գործունեության ձևերը՝

1. Պարապմունք՝ զրույց,
2. Ունկնդրում՝ հեքիաթի ընթերցում նկարներով,
3. Վերապատմում՝ հարցերի միջոցով:

Նպատակը.

- Զարգացնել սաների լսելու կարողությունը:
- Զարգացնել կապակցված ինքնուրույն խոսքը:
- Դաստիարակել հուզական արձագանք և հետաքրքրություն գրական ստեղծագործության՝ հեքիաթի նկատմամբ:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ ԽՀ – (ա), (ե), (զ), (ը), Ի - (ա), (բ), (գ), (դ), ՀՍԱ - (ա), (բ), (ե)

Թեմայի վերջնարդյունքները՝

Սանը՝

- ձևակերպում է հարցեր լսած բովանդակության շուրջ, քննարկում է դրա նպատակը,
- արտահայտում է իր հույզերն ու զգացմունքները խոսքով և հաղորդակցման ոչ խոսքային ձևերով,
- պատմում է հեքիաթը `պատասխանելով հարցերին,
- դրսևորում է քննադատական վերաբերմունք ներկայացվող նյութի նկատմամբ, կատարում է հետևություններ և այդ առնչությամբ արտահայտում իր կարծիքը:

Անհրաժեշտ նյութեր

1. Հեքիաթ՝ նկարներով «Երկինքը փուլ է գալիս» (QR),
2. Ձվի մակետ՝ մեջը ճուտիկ,
3. Նկարներով քարտեր,
4. Գունավոր մատիտներ, սպիտակ թղթեր, մկրատներ,
5. Հեռուստացույցի մակետ և հերոսների դիմակներ:

Պարապմունքի ընթացքը.

Խթանում

1. Գուշակիր, թե ինչ կա տուփի/ձվի մեջ:
Դաստիարակը տուփի/ձվի մակետի մեջ դնում է ճուտիկ ու տալիս է, որ երեխաները թափահարելով կռահեն, թե ինչ կա այնտեղ: Նրանք կարող են այնպիսի հարցեր տալ, որոնց դաստիարակը կպատասխանի այո՛, կամ ո՛չ: Նրանք պետք է ուշադիր լինեն, որ հարցերը չկրկնվեն:

2. Զրույց՝ «Լսում ենք ուշադիր, ճիշտն ու սխալը տարբերում»
Դաստիարակը հարցնում է երեխաներին.
- Երեխանե՛ր, խնդրում եմ պատմեք, թե ինչ եք տեսել մանկապարտեզ գալու ճանապարհին:

Առանց շտապելու լսել երեխաներին և արտահայտել վերաբերմունք լսածի շուրջ, ասելով՝ իսկապես...., դու հաստա՞տ ես հիշում, որ...., ի՞նչ ովքեր տեսան....., կամ հարցերով ճշտումներ կատարել: Դաստիարակը երեխաների պատմածին ավելացնում է ենթադրություններ և ամեն անգամ հարցնում է, թե իր ասածը ճիշտ է, թե՝ ոչ: Օրինակ, եթե երեխան պատմում է, որ ճանապարհին շուն է տեսել, դաստիարակը կարող է ավելացնել. «Շունը հաչո՞ւմ էր և ուզում էր քեզ հետ խաղա՞լ», կամ «Շունը քեզ չնկատե՞ց»:

Իմաստի ընկալում

Դաստիարակը կարդում է հեքիաթը և ցուցադրում նկարները: Ցանկալի է ունենալ նաև գիրք, որտեղ կա հեքիաթի տպագիր տարբերակը:

Երկինքը փուլ է գալիս

Լինում է, չի լինում՝ մի Ճստիկ-ճուտիկ: Էս Ճստիկ-ճուտիկը մի օր ծածուկ մտնում է հարևան պարտեզը, որ քուջուջ անի:

Ցուցադրել նկարը



Ահա՛ այսպիսի ճուտիկ:

Մեկ էլ հանկարծ թփից մի վարդ է պոկվում, ընկնում է պոչին: Ճստիկ-ճուտիկը վախեցած դուրս է փախչում:

Ցուցադրել նկարը

Ահա՛ վարդի թուփը:

Վազում է վազում, հասնում է Հավիկ-Մարիկին:
- Վա՛յ, Հավիկ-Մարիկ,- կանչում է հետևից,- երկինքը փուլ է գալիս:
- Ա՛յ Ճստիկ-ճուտիկ, էդ որտեղից իմացար,- հարցնում է Հավիկ-Մարիկը:
- Օ՛, ես իմ աչքով տեսա, իմ ականջով լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

Ցուցադրել նկարը



Ահա՛ Հավ-Մարիկը:

Դաստիարակը տալիս է երեխաներին հարցեր, որ կարողանան տարբերակել լսածը ճիշտ է, թե՝ ոչ:

- Երեխանե՛ր, ուշադիր նայեք Հավիկ-Մարիկի դեմքին, ինչ եք տեսնում. ինչո՞ւ է այդպես:

Լսել պատասխանները և շարունակել:

- Դե, արի փախչենք, - ասում է Հավիկ-Մարիկը:

Վազում են, վազում, հասնում են Բադիկ-Տատիկին:
- Վա՛յ, Բադիկ-Տատիկ,- կանչում է Հավիկ-Մարիկը,- երկինքը փուլ է գալիս:
- Ա՛յ Հավիկ-Մարիկ, էդ որտեղից իմացար:
- Ճստիկ-ճուտիկն է ասում:
- Ա՛յ Ճստիկ-ճուտիկ, էդ որտեղից իմացար:
- Օ՛, ես իմ աչքով տեսա, իմ ականջով լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

Ցուցադրել նկարը



Ահա՛ Բադիկ-Տատիկը:

Դաստիարակը տալիս է հարցեր երեխաներին, որ նրանք ուշադրություն դարձնեն այն բանին, որ պետք է լսածի մասին մտածել:

- Ինչ է մտածում Բադիկ-Տատիկը, երբ լսում է Հավիկ-Մարիկին:

- Ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ Բադիկ-Տատիկը հավատում է Հավիկ-Մարիկին ու Ճստիկ-Ճուտիկին:

- Դե, եկեք փախչենք, - ասում է Բադիկ-Տատիկը:
Վազում են, վազում, հասնում են Սագիկ-Քույրիկին:
- Վա՛յ, Սագիկ-Քույրիկ,- կանչում է Բադիկ-Տատիկը,- երկինքը փուլ է գալիս:
- Ա՛յ Բադիկ-Տատիկ, էդ որտեղից իմացար:
- Հավիկ-Մարիկն է ասում:
- Ա՛յ Հավիկ-Մարիկ, էդ որտեղից իմացար:
- Ճստիկ-ճուտիկն է ասում:
- Ա՛յ Ճստիկ-ճուտիկ, էդ որտեղից իմացար:
- Օ՜, ես իմ աչքով տեսա, իմ ականջով լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

Ցուցադրել նկարը



Ահա՛ և Սագիկ-Քույրիկը:

Դաստիարակը հարցն ուղղում է երեխաներին, և ասում, որ մտածելու համար ժամանակ է պետք. շտապել պետք չէ:

- Կարծես թե զարմացած է Սագիկ-Քույրիկը և չի շտապում պատասխանել Բադիկ-Տատիկին, կարող եք ասել, թե ինչու: Սագիկը նայում է ինչ-որ տեղ, ինչ եք կարծում, ուր է նայում և ինչ է մտածում:

- Դե, եկեք փախչենք,- ասում է Սագիկ-Խաթունը:

Վազում են, վազում, հասնում են Աղա- Աղվեսին:
- Աղա-Աղվես, Աղա-Աղվես,- կանչում է Հնդու-Թնդուն, երկինքը փուլ է գալիս:
- Ա՛յ Հնդու-Թնդու, էդ որտեղից իմացար,- հարցնում է Աղա-Աղվեսը:
- Սագիկ-Խաթունն է ասում:
- Ա՛յ Սագիկ-Խաթուն, էդ որտեղից իմացար:
- Բադիկ-Տատիկն է ասում:
- Ա՛յ Բադիկ-Տատիկ, էդ որտեղից իմացար:
- Հավիկ-Մարիկն է ասում:
- Ա՛յ Հավիկ-Մարիկ, էդ որտեղից իմացար:
- Ճստիկ-Ճուտիկն է ասում:
- Ա՛յ Ճստիկ-Ճուտիկ, էդ որտեղից իմացար:
- Օ՛, ես իմ աչքով տեսա, իմ ականջով լսեցի, մի կտոր էլ դեռ պոչիս ընկավ:

Ցուցադրել նկարը

Սա էլ Աղա-Աղվեսը:

Դաստիարակը երեխաներին առաջարկում է վերհիշել, թե իրենց ծանոթ հեքիաթներում աղվեսը ինչպիսին է եղել: Հենվելով նրանց նախնական գիտելիքի վրա, ենթադրություններ անել, թե ինչպիսին է աղվեսը այս հեքիաթում և պատասխանել հարցին:

-Ինչ եք կարծում, ինչու՞ է աղվեսը ժպտում, չէ՞ որ վատ լուր է լսում:

– Էդ ինչ եք ասում,- ասում է Աղա-Աղվեսը,– եկեք ձեզ տանեմ իմ տուն, որ երկինքը ձեր գլխին փուլ չգա:

Ճստիկ-Ճուտիկը, Հավիկ-Մարիկը, Բադիկ-Տատիկը, Սագիկ-Քույրիկը, բոլորը միասին ընկնում են

Աղա-Աղվեսի ետևից և մտնում են նրա որջը: Մտնում են նրա որջն ու էն մտնելն էր, որ մինչև էսօր էլ դեռ չեն դուրս եկել:

Գործնական աշխատանք՝ «Լավ ու վատ լուր»

Դաստիարակը երեխաներին բաժանում է փոքր խմբերի, պատրաստում է «Դեմքերի պաստառ»:

Տալիս է կենդանիների նկարներ, որոնք երեխաները պետք է ներկեն: Ապա հիշելով հեքիաթում նրանց զգացողությունները, փակցնեն պաստառին՝ համապատասխան դեմքերի տակ:

Նկարները պաստառին փակցնելուց հետո երեխաները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը՝ մեկնաբանում՝ ինչու է ուրախ և ինչու է տխուր հերոսը: Պետք է հարազատ մնալ հեքիաթի բովանդակությանը: Մինչ աշխատանքը սկսելը դաստիարակը խոսում է հետևյալ նկարների շուրջ:



Տխուր



Ուրախ



Վախեցած



Զարմացած



Անհանգիստ

Աշխատանքը ավարտելուց հետո, դաստիարակը ամփոփելով՝ դիմում է երեխաներին.

- Լուրը լսելուց հետո ինչի մասին է պետք մտածել:

- Ինչ հարց կտաս մեկին, ով քեզ վատ նորություն է հայտնում:

















Կշռադատում

Բաժանել երեխաներին 3-4 հոգանոց խմբերի:

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

- **Ինչն էր ձեզ համար ամենահետաքրքիրը:**

- Կա՞ր մի բան, որ դուք արդեն գիտեիք:

Դաստիարակը նախ տալիս է առաջին հարցը: Ժամանակ է տալիս, որ երեխաները փոքր խմբերում պատասխանեն, լսեն միմյանց: Նա շրջում է խմբից խումբ և խրախուսում, որ բոլորը խոսեն: Այնուհետև տալիս է երկրորդ հարցը: Նորից ժամանակ է տալիս, որ բոլոր երեխաները խոսեն: Այս ընթացքում դաստիարակը որևէ մեկնաբանություն չի անում: Երբ բոլոր խմբերը ավարտում են քննարկումները, դաստիարակը 1-2 նախադասությամբ ամփոփում է նյութը՝ մեջբերելով երեխաների պատասխանները: Օրինակ.

- Ես հասկացա, որ ձեզ համար ամենահետաքրքիրն այն էր, որ...

- Պարզվեց, որ դուք արդեն գիտեիք, որ ...

Թեմա 3. **Տեսաֆիլմի դիտում «Երկինքը փուլ է գալիս» (Հայկական ժողովրդական հեքիաթ):**

Գործունեության ձևերը՝

1. Պարապմունք՝ զրույց,
2. Դիտում՝ տեսաֆիլմ,
3. Քննարկում՝ տեսածի և լսածի շուրջ:

Նպատակը՝

- Զարգացնել սաների լսելու կարողությունը:
- Զարգացնել կապակցված ինքնուրույն խոսքը:
- Ամրապնդել ամբողջական նախադասություններով խոսելու կարողությունը:
- Սովորեցնել ճիշտ ընկալել տեսածը:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ ԽՀ – (ա), (գ), (ը), (ժ), Ի - (ա), (բ), (գ), (դ), (զ), (է) ՀՍԱ - (բ), (ը):

Թեմայի վերջնարդյունքները՝

Սանը՝

- ձևակերպում է հարցեր տեսաֆիլմի բովանդակության շուրջ, քննարկում դրա նպատակը,
- մեկնաբանում է հեղինակի մտադրությունները,
- դրսևորում է քննադատական վերաբերմունք ցուցադրվող տեսանյութի նկատմամբ, կատարում է հետևություններ և այդ առնչությամբ արտահայտում իր կարծիքը,
- գիտի ուշադիր լսելու կանոնները:

Անհրաժեշտ նյութեր

- Տեսաֆիլմ «Երկինքը փուլ է գալիս»,
- Մուլտհերոսների նկարներ,
- Հովհաննես Թումանյանի նկարը,
- Ուշադիր լսելու կանոնների շարք:

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Դաստիարակը տարբեր մուլտֆիլմերից էկրանով կադրեր է ցուցադրում կամ նկարներ ներկայացնում (եթե էկրան չկա), ցուցադրում է նաև Ճուտիկին: Յուրաքանչյուր կադրի հետ կապված նա կարճ նախադասությամբ ասում է, թե ինչի մասին է մուլտֆիլմը: Երեխաները մեկնաբանելով պետք է հաստատեն, կամ հերքեն դաստիարակի ասածը:

Իմաստի ընկալում

Դաստիարակը ցուցադրում է նախորդ պարապմունքին երեխաների պատրաստած պաստառը: Նա հիշեցնում է, թե ինչ հեքիաթ են լսել, ինչպես են լսել ու առաջարկում դիտել տեսանյութը:

Երեխաները դիտում են տեսանյութը, որտեղ հեքիաթը պատմում են իրենց հասակակիցները:

Ներկայացված է երկու տարբերակ, դաստիրակը կարող է ընտրություն կատարել:

«Երկինքը փուլ է գալիս»

https://www.youtube.com/watch?v=sGbDvYctuJM&t=14s

«Երկինքը փուլ է գալիս»

https://www.youtube.com/watch?v=OKqsBAR9IOU

Դիտելուց հետո երեխաները նշում են տարբերությունները կարդացածի և տեսածի միջև, ապա պատասխանում:

- Երեխաներ, ձեզ դուր եկավ նկարներով ընթերցանությունը, թե՞ ցուցադրությունը: Ինչու:

- Ի՞նչ կարող էին անել կենդանիները, երբ լսում էին սարսափելի վտանգի մասին:

- Ինչու աղվեսը չհավատաց վատ լուրին:

Դաստիարակը ներկայացնում է նաև հեքիաթների ժողովածու, որտեղ կա այդ հեքիաթը: Նա գովազդում է գիրքը, որպեսզի երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնի:

Դաստիարակը ցուցադրում է հեղինակի՝ Հովհաննես Թումանյանի նկարը, ասելով հետաքրքիր փաստեր նրա մասին.

Հովհաննես Թումանյանը ունեցել է 10 երեխա: Նրանց անունները օգտագործել է իր ստեղծագործությունների մեջ, որպես հերոսների անուններ:

Թումանյանն իր գրադարանի պատին փակցրել էր մի գրություն. «Խնդրում եմ չծխել և գիրք չխնդրել»:

Դաստիարակը երեխաներին ուղղում է հարցեր՝ նպատակ ունենալով զրույց ծավալել հեղինակի մտադրությունների մասին:

- Երեխանե՛ր, հեքիաթը Թումանյանը ո՞ւմ համար է գրել:

- Ինչո՞ւ է նա կենդանիներից ընտրել հենց ճուտիկին, որ վախենա վարդից:

- Կարո՞ղ է աղվեսը վախենալ վարդից ու մտածել, որ մեծ վտանգ է սպասվում իրենց: Ինչի՞ց կարող է աղվեսը վախենալ:

- Թումանյանը Ճուտիկին լսող ու հավատացող կենդանիներից ընտրել է հավին, սագին ու բադին: Իսկ ինչո՞ւ չի ընտրել աքաղաղին կամ շանը:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է մտածել հեղինակը մեր մասին, երբ գրել է հեքիաթը:

Կշռադատում

Դաստիարակը երեխաներին բաժանում է կարմիր և կանաչ փայտիկներ, կամ մատիտներ, ապա կարդում է ուշադիր լսելու կանոնները:

Երեխաները բարձրացնում են կարմիր փայտիկը, եթե համաձայն չեն կանոնին, կանաչը՝ եթե համաձայն են: Եթե երեխաները ունեն մեկնաբանություններ, դաստիարակը լսում է նրանց:

- Ուշադիր պետք է լսել խոսողին:
- Երբ որևէ մեկը քեզ պատմություն է պատմում, կարելի է նրան ընդհատել:
- Երբ մեկը խոսում է, նա տեղեկություն է հայտնում: Եթե քեզ հետաքրքիր չէ, կարող ես թողնել ու հեռանալ:
- Եթե քեզ որևէ բան են ասում, ու դու լավ չես հասկանում, կարող ես հարցեր տալ:
- Երբ նորություն ես լսում, հետո պետք է մտածել լսածի մասին:
- Լսելը ավելի դժվար է, քան՝ խոսելը:

Թեմա 4. «Կըտ-Կըտ ճուտիկը»

Գործունեության ձևերը՝

1. Ունկնդրում՝ հեքիաթի ընթերցում ***«Դադարներով ընթերցանություն»*** մեթոդով
2. Աշխատանք զույգերով
3. Աշխատանք փոքր խմբերով
4. Աշխատանք մեծ խմբով

Նպատակը՝

- Զարգացնել քննադատական վերաբերմունք համացանցում ներկայացված նյութերի նկատմամբ:
- Զարգացնել տարրական գիտելիքներ վնասակար սովորությունների հետևանքների մասին:
- Զարգացնել տարրական պատկերացումներ թվային անվտանգության կանոնների և դրանց հետևելու գործում սեփական պատասխանատվության մասին:
- Ներկայացնել անձնական տվյալների պահպանման անհրաժեշտությունը և դրանց գաղտնի պահելու կարևորությունը:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ ԽՀ – (ա), (բ), (գ, (ժ), Ի - (ա), (բ), (գ), (դ), (զ), (ը), ՀՍԱ - (ա), (բ), (գ), (դ), (ը), Ի - (ա), (ը):

Թեմայի վերջնարդյունքները՝

Սանը՝

- հորինում և կապակցված ներկայացնում է փոքրիկ պատմություն,
- վերլուծում է երևույթների պատճառահետևանքային կապերը, ներկայացնում է իր վերաբերմունքը,
- դրսևորում է պատասխանատվություն զույգերով, փոքր խմբերով կազմակերպված քննարկումներին, արտահայտում է մտքերը և հայտնում է կարծիք,
- դրսևորում է քննադատական վերաբերմունք ներկայացվող նյութի նկատմամբ՝ կողմնորոշվելով տեղեկատվության բազմազանության մեջ, կատարում է գրագետ ընտրություն,
- կատարում է հետևություններ և այդ առնչությամբ արտահայտում իր կարծիքը,
- ունի տարրական գիտելիքներ վնասակար սովորությունների հետևանքների մասին,
- ունի տարրական պատկերացումներ թվային անվտանգության կանոնների մասին, գիտակցում է սեփական պատասխանատվությունը՝ դրանց հետևելու գործում:

Անհրաժեշտ նյութեր

1. «Կըտ-Կըտ ճուտիկը» գիրքը կամ գրքի էլեկտրոնային տարբերակը, որի հղումը տեղադրված է Հավելված 4-ում,

2. «Կըտ-Կըտ ճուտիկը» գրքից 2 մեծ նկար (տես Հավելված 3):

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Փորձեք կռահել, թե ինչի մասին է հեքիաթը: Զույգերով քննարկում:

Ցուցադրել հեքիաթից երկու նկար և երեխաներին հարցնել.

- Երեխաներ, զույգերով խոսեք, թե ինչ եք տեսնում այս նկարներում և ինչի մասին կլինի ձեր կարծիքով այս հեքիաթը:

Լսել մի քանի պատասխան:

Իմաստի ընկալում

Դաստիարակը կարդում է հեքիաթը **«Դադարներով ընթերցանություն»** մեթոդով և ցուցադրում է նկարները:

«Կըտ-Կըտ ճուտիկը»

Կար-չկար, մի ճուտիկ՝

Ուրախ-զվարթ, ծլվլան:

Մի օր ցատկեց մեծ տան շեմին,

Խոր քնած էր տերն այդ տան:

Ապա մտավ նրա սենյակ

Կատվի կողքով գաղտագողի...

...Ու կտտացրեց համակարգչին

Մկնիկով նա՝ դրված գորգին:

ԿԸՏ, կտտացրեց էջ առ էջ

Ուրախ-զվարթ, ծվծվիկ:

Գնեց սիրուն մի թեյնիկ, ԿԸՏ,

Ապա՝ նախշուն մի շորիկ:

ԿԸՏ, ու գնեց մոտոցիկլետ,

ԿԸՏ, ու մի փեթակ մեղվի:

«Օ՛, Աստվա՛ծ իմ, - ասաց տերը, -

«Ե՞ս եմ արել այս պատվերը»:

Դադար 1-ին.

Հարց 1. Ինչի՞ մասին էր այս հատվածը:

Ժամանակ տալ երեխաներին մտածելու, ապա լսել մի քանի պատասխան:

Հարց 2. Ինչ կլինի հետո:

Բաժանել երեխաներին կույգերի: Մի քանի րոպե ժամանակ տալ, որ երեխաները կույգերով քննարկեն, որից հետո մի քանիսը պատասխանեն հարցին:

Երկրորդ գիշեր եկավ ճուտը,

Ուրախ, ԿԸՏ, կտտացրեց:

Ադամանդե ժամացույց, ԿԸՏ,

Թանկ ու կրակ պատվիրեց:

Գնեց հարյուր պայուսակ

Ու կոշիկներ կայքերից:

Տերը կնոջը նայեց: Նա էլ.

«Բան չհասկացա այս սարքից»:

Երրորդ գիշեր եկավ ճուտը,

Արագ անցավ նույն գործին:

Ոչխարներին՝ մոտոսայլակ,

Մի-մի չմուշկ՝ խոզերին:

ԿԸՏ, կովերին՝ մեքենա:

ԿԸՏ, ու այսպես շարունակ:

Իսպանիայի տոմս գնեց.

Ցուլին ծովափ ուղարկեց:

ԿԸՏ, ձիուկին գնեց սայլ:

ԿԸՏ, գնեց մի մեծ նավակ:

Ճուտիկները նավարկեցին՝

Ծվծվալով՝ ա՛յ քեզ զարմանք:

Ու ճուտիկը՝ ուրախ-զվարթ,

Մնաց մենակ ու ծվծվաց:

«ԿԸՏ, կգտնեմ ընկեր առցանց,

Որ չմնամ մենակ», - ասաց:

Դադար 2-րդ

Բաժանել երեխաներին կույգերի: Մի քանի րոպե ժամանակ տալ, որ երեխաները կույգերով քննարկեն, որից հետո մի քանիսը պատասխանեն հարցին:

Հարց 1. Ինչո՞վ էր նման և ինչո՞վ էր տարբերվում այս հատվածը ձեր կանխատեսածից:

Լսել մի քանի պատասխան:

Հարց 2. Ի՞նչ կլինի հետո:

Լսել մի քանի պատասխան:

ԿԸՏ, ու գնեց ֆոտոխցիկ՝

Ծվծվալով ուրախ-զվարթ:

Նկարվելու պատրաստ կանգնեց՝

Փետուրները կարգի բերած:

Դրեց նկարը կայքում,

Նշեց անուն և տարիք:

ԿԸՏ, ընկերների ցանկում

Երևաց մի նոր ճուտիկ:

ԿԸՏ, սկսեցին զրուցել,

Արագ դարձան ընկերներ:

Ծնողներից խիստ թաքուն՝

Որոշեցին հանդիպել:

Դադար 3-րդ.

Բաժանել երեխաներին կույգերի: Մի քանի րոպե ժամանակ տալ, որ երեխաները կույգերով քննարկեն, որից հետո մի քանիսը պատասխանում են հարցին:

Հարց 1. Ինչպե՞ս կավարտվի հեքիաթը:

Լսել մի քանի կարծիք:

Ու ճուտիկը գնաց անտառ,

Հսկա ծառի տակ սպասեց:

«Ինձ ընկեր եմ գտել», - ասաց:

Աղվեսն ասաց. «Ես եմ, ես»:

Կազմակերպել մեծ խմբով քննարկում (դաստիարակը, ելնելով խմբի երեխաների զարգացման մակարդակից և կարիքներից, որոշ հարցերի քննարկումը կարող է կազմակերպել զույգերով) հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչ զգացիր այս հեքիաթը լսելուց հետո:

- Ինչո՞ւ ճուտիկը հայտնվեց այս վտանգավոր իրավիճակում:

- Ճուտիկից անծանոթ մեկը իմացավ նրա անունը, տարիքը: Այդ ամենը կոչվում է *անձնական տվյալներ:* Ի՞նչը կարող է համարվել անձնական տվյալ (հասցե, հեռախոսահամար և այլն):

- Ինչպե՞ս պետք է վարվեր ճուտիկը վտանգից խուսափելու համար:

- Ճուտիկը ցանկանում էր պատվերներ կատարել համացանցից (իր և ընկերների համար): Ի՞նչը սխալ արեց: Ինչո՞ւ էր դա սխալ, ի՞նչ *հետևանքներ* ունեցավ այդ սխալը: Ինչպե՞ս պետք է վարվեր ճուտիկը:

Կշռադատում

Բաժանել երեխաներին 3-4 հոգանոց խմբերի:

Աշխատանք կազմակերպել **«Խոսող փայտիկ»** մեթոդի կիրառմամբ, որպեսզի երեխաները հերթով խոսեն, և ապահովվի յուրաքանչյուրի մասնակցությունը:

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

- Ի՞նչ նմանություն կար ձեր հորինած և այս հեքիաթների միջև:

- Շարունակիր նախադասությունը. «Այս հեքիաթից ես սովորեցի ...»:

Դաստիարակը տալիս է առաջին հարցը: Ժամանակ է տալիս, որ երեխաները փոքր խմբերում պատասխանեն այս հարցին, լսեն միմյանց: Ապա շրջում է խմբից խումբ և խրախուսում է, որ բոլորը խոսեն: Այնուհետև տալիս է երկրորդ հարցը և նորից ժամանակ տալիս, որ երեխաները խոսեն: Այդ ընթացքում նա որևէ մեկնաբանություն չի անում: Երբ բոլոր խմբերը ավարտում են քննարկումները, դաստիարակը խնդրում է, որ յուրաքանչյուր խումբ 1-2 նախադասությամբ ներկայացնի, թե ինչ է սովորել հեքիաթից, որից հետո նա ամփոփում է նյութը՝ մեջբերելով երեխաների պատասխանները:

Օրինակ. Դուք սովորեցիք, որ .....

Դաստիարակը գրի է առնում եզրահանգումները գրատախտակին: Հետագայում գրածը պետք է անցկացնել ««Կըտ-կըտ ճուտիկը» հեքիաթից սովորեցինք, որ .... » պաստառի վրա և փակցնել խմբասենյակի պատին:

Գործնական աշխատանք 1. Նկարում ենք

Յուրաքանչյուր երեխա նկարում է հեքիաթից իրեն դուր եկած հատվածը: Աշխատանքը ավարտելուց հետո **«Շրջիր – Կանգ առ – Զույգ կազմիր»** ռազմավարությամբ խումբը բաժանվում է զույգերի, երեխաները միմյանց ցույց են տալիս իրենց նկարած նկարները և պատմում են պատկերած հատվածների մասին:

Հետո նկարները փակցնում են ցուցադրման պատին՝ միասին քննարկելու համար:

Քննարկման հարցեր.

- Կա՞ն երեխաներ, որ պատկերել են հեքիաթի նույն հատվածը:
- Ի՞նչը զարմացրեց ձեզ այս նկարների մեջ:
- Եթե նորից կատարենք այս աշխատանքը, ապա ո՞ր դրվագը կնկարեք:

Գործնական աշխատանք 2. Վերապատմում ենք

Հեքիաթից հատվածների վերապատմում՝ *«խառնված հերթականություն»* մեթոդով

Բաժանել երեխաներին 4 հոգանոց խմբերի, տրամադրել խմբին տրամաբանական հաջորդականություն կազմող 4-6 նկարներից բաղկացած շարքը խառնված հերթականությամբ: Երեխաները պետք է համագործակցելով դասավորեն նկարները ըստ հերթականության և վերապատմեն ստացված հատվածը:

Գործնական աշխատանք 3. Բեմադրում ենք

Տարբերակ 1. Նույն խմբերը իրենց տրված նկարների շուրջ պատրաստում են կարճ բեմականացում: Երեխաները կարող են ավելացնել/փոփոխել կերպարները և իրավիճակները:

Տարբերակ 2. Յուրաքանչյուր խումբ կարող է հեքիաթի շարունակություն հորինել և բեմականացնել այն:

Տարբերակ 3. Հարցազրույց ճուտիկի հետ. յուրաքանչյուր խումբ որոշում է, թե ինչ հարցեր կտա Ճուտիկին:

Դաստիարակը աջակցում է, որպեսզի երեխաները «բաց հարցեր» ձևակերպեն:

Գործնական աշխատանք 4. Գիրք ենք ստեղծում:

Յուրաքանչյուր երեխա ստանում է իր նկարած նկարը: Երեխաները կազմում են 4-5 հոգանոց խմբեր և իրենց նկարներով կազմում են գիրք: Պատրաստում են գրքի կազմը (նկարելով կամ ապլիկացիայով), նոր վերնագիր են ընտրում գրքի համար: Հետո խմբերը միմյանց ներկայացնում են իրենց ստեղծած գրքերը և պատմում, թե հեքիաթի որ հատվածն է ներկայացված իրենց գրքում և ինչու են ընտրել տվյալ վերնագիրը:

Գործնական աշխատանք 5. Համացանցից օգտվելու մեր կանոնները

Երեխաները նստում են շրջանաձև: Դաստիարակը երեխաներին ուղղում է հետևյալ հարցերը.

- Երեխաներ, իսկ մեզ հետ կարո՞ղ են կատարվել այնպիսի դեպքեր, ինչպես Կըտ-կըտ ճուտիկի հետ:
- Ձեզ հետ պատահե՞լ է նման դեպք, կամ դուք լսե՞լ եք նման դեպքերի մասին:

Ժամանակ տալ մտածելու համար և լսել մի քանի պատասխան:

Դաստիարակը ցուցադրում է ««Կըտ-կըտ ճուտիկը» հեքիաթից սովորեցինք, որ .... » պաստառը և նորից ընթերցում է երեխաների համար իրենց եզրահանգումները: Պետք է քննարկում ծավալել երեխաների հետ և աջակցել, որպեսզի միասին ձևակերպեն համացանցից օգտվելու անվտանգության կանոնները: Դրանք անհրաժեշտ են իրենց և իրենց ընտանիքների ապահովության համար: Օրինակ, կարող են լինել այսպիսի կանոններ.

1. Ձեր և ձեր ընտանիքի անդամների մասին անձնական տեղեկությունները գաղտնիք են:

2. Համացանցում անծանոթներից հաղորդագրություն կամ հանդիպելու առաջարկ ստանալու դեպքում տեղյակ պահել ծնողներին:

3. Համակարգչով խաղալիս անծանոթ կամ վախեցնող պատկերի վրա սեղմելուց առաջ պետք է անպայման դիմել մեծահասակի:

4. Համակարգչով, հեռախոսով զբաղվելիս պետք է պահպանել ծնողների կողմից սահմանած ժամային սահմանափակումները:

Հետագայում դաստիարակը տպագրված կանոնները և համապատասխան նկարները պետք է հավաքի մի պաստառի վրա:

Գործնական աշխատանք 6. Քննարկում ենք

«Չորս անկյուններ»

Խմբասենյակի 4 անկյուններում տեղադրել սահմանված կանոնները արտահայտող պատկերները:

Առաջադրանք.

- Երեխաներ, մոտեցեք այն անկյունին, որտեղ փակցված է ձեզ համար ամենակարևոր կանոնը: Պատմեք միմյանց, թե ինչու է այդ կանոնը կարևոր: Ինչպես եք դուք այն պահպանում կամ պլանավորում պահպանել:

Անկյուններում քննարկումները ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է մյուս խմբերին իրենց քննարկման ժամանակ հնչած հիմնական փաստարկները:

Թեմա 5. «Խելացի Պինգվինի արկածները»

Գործունեության ձևերը՝

1. Պարապմունք՝ զրույց,
2. Ունկնդրում՝ հեքիաթի ընթերցում նկարներով,
3. Աշխատանք զույգերով,
4. Աշխատանք մեծ խմբով:

Նպատակը՝

- Զարգացնել քննադատական վերաբերմունք համացանցում ներկայացված նյութերի նկատմամբ,
- Խորացնել մեդիայի վերաբերյալ պատկերացումները և օգնել ճիշտ կողմնորոշվել մեդիա բազմազանության մեջ,
- Ներկայացնել ապատեղեկատվությունը և դրա հետևանքները:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Շ - (գ), (ժգ), (է), ԽՀ – (ա), (բ), (գ), (ժ), Ի - (ա), (բ), (գ), (դ), (զ), (ը), ՀՍԱ - (ա), (բ), (գ), (դ), (զ), (ը), Ի - (ա), (թ):

Թեմայի վերջնարդյունքները՝

Սանը՝

- ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ,
- մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում:
- տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները:
- դրսևորում է պատասխանատվություն զույգերով, փոքր խմբերով կազմակերպված քննարկումներին, արտահայտում է մտքերը և հայտնում է կարծիք,

Անհրաժեշտ նյութեր

1. «Խելացի Պինգվինի արկածները» սահիկաշար (QR),
2. Համակարգիչ, պրոյեկտոր,
3. Պինգվինների պարի մեղեդին,
4. Նվագարկիչ,
5. Մեծ պաստառ «Համացանցից օգտվելու անվտանգության կանոնները»,

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Երեխաները դաստիարակի հետ միասին նստում են շրջանաձև: Դաստիարակն ասում է.

- Երեխանե՛ր, բոլորիս կյանքում լինում են իրավիճակներ, երբ մենք օգնության կարիք ենք ունենում: Մտածեք և փորձեք հիշել մի դեպք, երբ դժվար իրավիճակի մեջ եք եղել: Ո՞ւմ եք դիմել օգնության համար:

«Մտավոր գրոհի» մեթոդով լսել պատասխանները և գրառել դրանք գրատախտակին:

Իմաստի ընկալում

Դաստիարակը ցուցադրում է «Խելացի Պինգվինի արկածները» սահիկաշարը, կարդում է մինչև 7-րդ սահիկը: Կարդում է հարցը և ժամանակ տալիս, որ երեխաները զույգերով քննարկեն և պատասխանեն: Լսում է մի քանի պատասխան: Ապա անդրադառնում է գրատախտակին, որպեսզի տեսնի՝ կա՞ն համընկնումներ: Անհրաժեշտության դեպքում հարցնում է.

- Ինչո՞ւ ես այդպես կարծում:

Այնուհետև կարդում է մինչև 11-րդ սահիկը: Երեխաների հետ 2-3 անգամ միասին կրկնում են երգը: (QR)

Դաստիարակը կարդում է 12-14-րդ սահիկները: Լսում է մի քանի պատասխան, կարդում է 15-րդ սահիկը, բացում է 16-րդը, և միասին երգում են Պինգվինիկի երգը: Կարդում է մինչև 19-րդ սահիկը: Եվ հարցնում է.

- Երեխաներ, ձեր կարծիքով ի՞նչ կպատահի հետո: **Զույգերով քննարկում**:

Լսել մի քանի պատասխան: Կարդալ մինչև 21-րդ սահիկը: Հարցը տալուց հետո լսել մի քանի պատասխան: Միասին երգել 23-րդ սահիկի երգը: Կարդալ մինչև 29-րդ սահիկը: Ժամանակ տալ, որ երեխաները մտածեն, զույգերով քննարկեն և կիսվեն պատասխաններով:

Կշռադատում

Պատմելուց հետո դաստիարակը **«Շրջիր, կանգ առ, զույգ կազմիր»** մեթեդով ամփոփում է հեքիաթը հետևյալ հարցերով.

- Ի՞նչ սովորեցիք այս պատմությունից:

- Եկեք վերհիշենք համացանցից օգտվելու անվտանգության կանոնները:

Ֆիզ. դադար -Պարել պինգվինների պարը: (QR)

Արվեստի պարապմունքին պատրաստել բեմականցման համար անհրաժեշտ պարագաներ (պլանշետներ, պինգվինի գլխարկներ, մայրիկի գլխազարդեր, հայրիկի փողկապներ, նվերի տուփեր և այլ անհրաժեշտ պարագաներ):

Հաջորդ խոսքի զարգացման պարապմունքի ընթացքում երեխաներին բաժանել ենթախմբերի: Յուրաքանչյուր ենթախումբ նախապատրաստում է բեմականացում՝ ըստ հեքիաթի: Պետք է հետևել, որ խմբի բոլոր երեխաները մասնակցեն դերախաղին: Կարող են ներմուծվել լրացուցիչ անհրաժեշտ կերպարներ և պարագաներ (ինտերնետից խոսող անծանոթ, երգող պինգվինների խումբ, և այլն):

Բեմականցման ընթացքում կարող են օգտագործել արվեստի պարապմունքին պատրաստած պարագաները:

Կարևոր է, որ բոլոր խմբերը ներկայացնեն իրենց բեմականացումները խմբի մյուս երեխաներին: Մի քանի օրվա ընթացքում, օրվա երկրորդ կեսին կազմակերպել բոլոր ենթախմբերի բեմականացումների ներկայացումը:

Այլ առաջարկություններ. Հղում անել և օգտագործել «Կըտ-կըտ ճուտիկը» պարապմունքի ընթացքում ստեղծած կանոնների պաստառը:

II. ԻՆՁ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱՇԽԱՐՀԸ

Թեմա՝ **«Մասնագիտությունը՝ լրագրող»**

Գործունեության ձևերը՝

1. Ինքնուրույն գործունեություն,
2. Բեմականացում:

Նպատակը՝

- Զարգացնել սեփական անձի և շրջակա միջավայրի մասին պատկերացումները:
- Նպաստել ճանաչողական հետաքրքրությունների, հաղորդակցման հմտությունների զարգացմանը:
- Ձևավորել հասարակության մասին նախնական պատկերացումներ:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Ի - (գ), (դ), (զ), (ը), ՀՍԱ- (ա), (բ), (դ), (ե), ԻՍԱ - (է), (ի):

Թեմայի վերջնարդյունքները՝

Սանը՝

- գիտի ինչով են զբաղվում տարբեր մասնագիտությունների մարդիկ, ովքեր են լրագրողները,
- հարցեր է ձևակերպում,
- լսում է ուրիշի խոսքը և արձագանքում է:

Պարապմունքի ընթացքը.

Պարապմունքի հիմնական խնդիրն է ծանոթացնել երեխաներին լրագրողի մասնագիտության հետ, և թե նրանք ինչպես են հարցեր տալիս, պատասխանում հարցերին, լուրեր գրում:

Խթանում

Դաստիարակը երեխաների հետ նստած է կլոր սեղանի շուրջ: Սեղանին ամսագրեր են, թերթեր և առանձին տպագրված նյութեր: Դաստիարակը ժամանակ է հատկացնում, որ երեխաները նայեն, թերթեն, ուսումնասիրեն նյութերը:

Հետո երեխաներին հարցեր է տալիս զրուցելու համար: Պետք է ժամանակ տրամադրել, որ երեխաները պատասխանեն հարցերին, չշտապեցնել և ուղղակի զրույց վարել:

- Երեխաներ, ո՞ւմ տանը կան այսպիսի թերթեր կամ ամսագրեր:
- Ինչի՞ համար են դրանք պետք:
- Որտեղի՞ց են ստանում նորությունները/լուրերը:
- Ովքե՞ր են գրում դրանք թերթերում և ամսագրերում:

Իմաստի ընկալում

Դաստիարակը երեխաներին ցուցադրում է միկրոֆոնը և հարցնում, թե ինչ է դա և ինչպես են այն օգտագործում: Ապա պատմում է լրագրողի մասնագիտության և գործունեության մասին: Մասնագիտությունը կոչվում է լրագրություն, իսկ մասնագետի անունն է **լրագրող**՝ լուր գրող: Դաստի-

արակը պատմում է, թե ինչպես են լրագրողները կիրառում միկրոֆոնը՝ հարցազրույցներ վարելիս:

Երեխաներին բաժանել երեք խմբի, որպեսզի մտածեն և ձևակերպեն հարցեր «Երկինքը փուլ է գալիս» հեքիաթի շուրջ: Հետո առաջարկվում է խմբի ներսում հարցեր ուղղել միմյանց: Ցանկալի է, որ խմբերի հետ աշխատեն դաստիարակի օգնականները:

Երբ հարցերը պատրաստ լինեն, երեխաները վերցնում են միկրոֆոնը, հարցը ուղղում են խմբի անդամներին: Այդ ընթացքում դաստիարակները կարող են երեխաների հարցազրույցները նկարահանել կամ լուսանկարել, որպեսզի աշխատանքի ավարտից հետո միասին նայեն ու իրենց տեսնեն լրագրողի դերում:

Կշռադատում

Դաստիարակը ինքն է հանդես գալիս լրագրողի դերում: Վերցնում է միկրոֆոնը և հարցեր է ուղղում երեխաներին՝ կապված լրագրողական աշխատանքի հետ:

- Երեխանե՛ր, ո՞ւմ դուր եկավ լրագրողի աշխատանքը և ինչո՞ւ:

- Ի՞նչ հարցեր էին ձեզ տալիս լրագրողները:

- Ավելի հեշտ էր հարց տա՞լը, թե՞ պատասխանելը:

Դաստիարակի օգնականը այս հարցազրույցը ևս նկարահանում է: Դաստիարակը նկարահանումների ցուցադրություն է կազմակերպում խմբասենյակում:

III. ԽԱՂԵՐ

Թեմա՝ **«Աղվեսի բույնը» (Հայկական ժողովրդական խաղ)**

Գործունեության ձևերը՝

1. Շարժախաղ՝ վազքով

Նպատակը՝

- Պահպանել և ամրապնդել երեխայի առողջությունը, զարգացնել կենսական նշանակություն ունեցող շարժումները, ճարպկությունը, արագաշարժությունը, ճկունությունն ու դիմացկունությունը:

Խաղի ընթացքը և քայլերը՝ 1-ին տարբերակ

1. Երեխաները միաշարք կանգնում են իրար հետևից՝ ոտքերն ուսերի լայնությամբ բացած (գոյանում է մի երկար «անցք»՝ աղվեսի բնի մուտքը):
2. Երեխաներից մեկը փախչողն է՝ «Աղվեսը», իսկ մյուսը հետապնդողը՝ «Աղվեսին բռնողը»: Վերջինիս տրվում է թաշկինակ կամ ժապավեն:
3. «Աղվեսին բռնողը» թաշկինակով հարվածում է «Աղվեսին», որը կանգնածների աջ կողմից դեպի ձախ, կամ ձախից դեպի աջ է փախչում: Հարմար պահ ընտրելով՝ նա մտնում է շարքի մեջ, երեխաների ոտքերի արանքով դուրս է գալիս և կանգնում շարքի վերջում:
4. Հետապնդողը թաշկինակը տալիս է շարքում կանգնած առաջին երեխային և դառնում «Փախչող աղվես»: Իսկ կանգնած երեխան դառնում է հետապնդող «Աղվես»:

Խաղի ընթացքը և քայլերը՝ 2-րդ տարբերակ

1. Եթե դժվար է երեխաների ոտքերի արանքով չորեքթաթ վազել, ապա երեխաները կանգնում են դեմ դիմաց և բռնում միմյանց ձեռք:
2. Այդ «անցքով» /որն ավելի լայն է/ անցնում է «Փախչող աղվեսը»: Այս կերպ խաղն ավելի է աշխուժանում:

Խաղի կանոնները.

- Փախչողին պետք է հարվածել միայն թաշկինակով կամ ժապավենով:
- Փախչողը 1-2 անգամ պետք է պտտվի կանգնած երեխաների շուրջը կամ շրջանցի նրանց:
- Չի կարելի փախչողին հարվածել, երբ նա արդեն մտել է «անցքը»:

VI. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **«Նկարում ենք ճուտիկ»**

Գործունեության ձևը՝

1. Պարապմունք և խաղ

Նպատակը՝

- Զարգացնել գեղարվեստաստեղծագործական ունակությունները:
- Մշակել իրական երևույթների ու առարկաների նկատմամբ հուզազգայական վերաբերմունք:

Վերջնարդյունքները՝

Սանը՝

- պատկերում է ճուտիկ ՝ հետևելով քայլաշարին,
- մեկնաբանում է նկարածը:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Շ - (ժգ), ԽՀ - (բ), (դ), Ի - (գ), (դ), (զ), ՀՍԱ - (ա), (գ), (դ), (զ), (է), ԻԱԱ - (ա), (դ):

Խթանում

Խաղ. «Կորած ճուտիկը»

Երեխաներից մեկը շրջվում և կանգում է երեխաների խմբին մեջքով: Նա պարտեզում քուջուջ անելիս կորել է: Մյուսները հերթով կանչում են նրան ՝ Ա՛-ռ՛ու: Կորած երեխան պետք է գուշակի, թե ով է իրեն կանչում, ով է իր մասին հոգ տանում:

Իմաստի ընկալում

Սովորում ենք նկարել ճուտիկ

1. Դաստիարակը ցուցադրում է իր նկարած ճուտիկի նկարը: Նա երեխաներին ասում, որ իրենք էլ կկարողանան նկարել այդպիսի ճուտիկ, եթե հետևեն իր հրահանգներին:
2. Յուրաքանչյուր երեխայի համար անհրաժեշտ է նկարչական թուղթ, գծագրական մատիտ, ռետին:
3. Դաստիարակը քայլերը ներկայացնում է մեծ թղթի կամ գրատախտակի վրա: Նա սպասում է մինչև երեխաները ավարտեն: Անհրաժեշտության դեպքում մոտենում է և աշխատանքի բարելավման համար ուղղություն ցույց տալիս:
4. Երեխաները սովորում են նկարել: Նրանք կարող են նկարել զարմացած, վերև նայող, ներքև նայող, բարկացած ճուտիկ:

Կշռադատում

Դաստիարակը հանձնարարում է երեխաներին ճուտիկի անունից պատմել, թե ինչու է զարմացած ու զայրացած, ինչ է տեսել վերևում և ինչ է փնտրում:

ԻՆՉՊԵՍ ՆԿԱՐԵԼ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՃՈՒՏԻԿ

1



2



3



4



5



6





Զարմացած



Զայրացած



Վերև նայող



Ցած նայող

Քննադատական մտածողություն

Աշխարհը հետզհետե դառնում է բազմաբարդ, և ժողովրդավարությունն ավելի է տարածվում: Ժամանակի թելադրանքով երիտասարդներից պահանջվում են կարողություններ, որոնք կօգնեն նրանց լուծել բարդ խնդիրներ, հանգամանքները դիտարկել, քննել, կարծիք հայտնել, լրջամիտ ու խելացի որոշումներ կայացնել: Ուստի նրանք պետք է կարողանան քննել, հետո դատողություններ անել, այսինքն՝ քննադատաբար մտածել: Այս հմտությունը կարող է ձևավորվել և զարգանալ միայն ուսումնական բարենպաստ միջավայրում:

Ինչ է քննադատական մտածողությունը

Քննադատական մտածողության մասին շատ է գրվել: Քննադատաբար մտածողների համար ինֆորմացիայի հիմնական ընկալումը ավելի շուտ ուսումնական գործընթացի սկիզբն է, քան վերջնակետը: Քննադատաբար մտածելը ենթադրում է ընկալել գաղափարը, ապա սկսել մտածել դրա մասին: Դիտարկել այն հակադիր տեսանկյուններից, հիմնավորել համապատասխան փաստարկներով, ապա գալ որոշակի դիրքորոշման:

Քննադատական մտածողությունը ներառնում է մտավոր բարդ գործընթաց, որը սկսվում է ինֆորմացիայով և ավարտվում է որոշման կայացմամբ:

Քննադատական մտածողությունը արդյունք է: Դա մտածողության ձև է, որի շնորհիվ մարդը, գաղափարների կամ ինֆորմացիայի հետ փոխգործության մեջ մտնելով, մտածում է քննադատաբար (քննելով և դատելով): Սա ակտիվ գործընթաց է, որը խթանվում կամ ինքնաբուխ է ի հայտ գալիս: Այն սովորողին ընձեռում է ինֆորմացիան տնօրինողի կայուն դեր: Սովորողը կարողանում է ինֆորմացիան քննել, յուրացնել, ձևափոխել, հարմարեցնել կամ ժխտել: Այն դրսևորվում է, երբ սովորողը սկսում է այս կարգի հարցեր տալ.

- Ինչ արժեք ունի այս ինֆորմացիան իմ համար,
- Ինչպե՞ս է այս գիտելիքը հարաբերակցվում իմ պատկերացումների հետ,
- Արդյո՞ք այս ինֆորմացիան օգտակար է,
- Ինչպե՞ս եմ վերաբերում այս գաղափարներին,
- Այս գաղափարների համաձայն գործելու հետևանքն ինչպիսի՞ն կլինի իմ և ուրիշների համար:

Քննադատական մտածողությունը բարդացված մտածելակերպ է: Որպես այդպիսին՝ այն հաճախ ընկալվում է որպես միայն ավագ դասարանների աշակերտների կարողություններին համապատասխանող մոտեցում: Սակայն նման պատկերացումը սխալ է: Փոքր երեխաները ևս կարող են ներգրավվել իրենց զարգացմանը համապատասխան բարդացված մտածողության գործընթացում: Նրանք պատրաստակամորեն կատարում են առաջադրանքներ, հարցեր են տալիս, լուծում են բարդ խնդիրներ, կայացնում որոշումներ:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԲՈԼՈՐ ՏԱՐԻՔՆԵՐՈՒՄ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ և ԽԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Իսկ ինչպե՞ս է ուսուցման և ուսումնառության ԽԻԿ համակարգը կապվում քննադատական մտածողության հետ: Ինչպես արդեն նշել ենք, քննադատական մտածողության համար պահանջվում է հասկանալու և իմացածի մասին խորհելու ունակություն: Սակայն մինչ այս հմտությունը ձեռք բերելը երեխաները պետք է իրենց գիտելիքները դուրս բերեն գիտակցական մակարդակ: Հաճախ երեխաները դժվարանում են դրսևորել իրենց ունեցած գիտելիքը, ինչը խիստ դժվարացնում է նոր ստացած ինֆորմացիայի կշռադատումն իմաստալից համատեքստում: Եթե չհաջողվի նախորդ գիտելիքներն ակտիվացնել, երեխայի գլխում կարող է խառնաշփոթ առաջանալ կամ կարող են անգամ իրարամերժ մտքեր ծագել, իսկ նման արդյունքը կարող է խանգարել հետագա ուսմանը: Իմացածի գիտակցումը էական նշանակություն ունի քննադատական մտածողության համար:

ԽԻԿ համակարգը սկսվում է **Խթանում** փուլով: Այստեղ երեխաներին առաջարկվում է վերհիշել որևէ թեմայի մասին իրենց գիտելիքները, կանխատեսումներ անել և հասկանալ թեմայի ուսումնասիրման նպատակը: Դրան հաջորդում է **Իմաստի ընկալում** փուլը: Այս փուլում երեխաները ծանոթանում են նոր նյութին: Նրանցից ակնկալվում է նոր գաղափարները կամ բովանդակությունը համադրել իրենց սեփական՝ արդեն գոյություն ունեցող պատկերացումների հետ: Համակարգն ավարտվում է **Կշռադատման** փուլով, որի ընթացքում երեխաները իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են նոր սովորածի մասին:

ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) համակարգ

Նախադպրոցական խմբերում դաստիարակները պետք է աշխատեն խմբի բոլոր երեխաների հետ: Պետք է պարապմունքներն անցկացնեն ծրագրի մեկ բաժնի շրջանակներում և միևնույն թեմայի շուրջ՝ կիրառելով ուսուցման և ուսումնառության **ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) համակարգը:**

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Այս փուլում երեխաներն ակտիվորեն փորձում են վերհիշել թեմայի մասին իրենց ունեցած ամբողջ ինֆորմացիան, միաժամանակ խորհել բուն թեմայի մասին, որը պետք է մանրամասն ուսումնասիրեն: Այդ պատճառով շատ կարևոր է խթանել, հետաքրքրել, ոգևորել, քաջալերել երեխաներին՝ վերհիշելու իրենց իմացածը: Երեխաներին օգնելով՝ հստակեցնել ունեցած գիտելիքները և պատկերացումները, մենք օգնում ենք նրանց կայուն հիմք պատրաստել նոր ինֆորմացիան ընդունելու և հիմնավորապես յուրացնելու համար:

Խթանման փուլի երկրորդ նպատակը երեխային շահագրգռելն ու ակտիվացնելն է: Սովորելը պետք է ակտիվ գործընթաց լինի: Հաճախ է պատահում, երբ երեխաները պասիվ վիճակում նստում են խմբասենյակում ու լսում են դաստիարակին: Նա երեխաների փոխարեն անում է ամբողջ աշխատանքը: Իսկ իրենք, առանց հասկանալու, երբեմն կիսաթմբիրի մեջ, լուռ նայում են դաստիարակին:

Պարապմունքների խթանման փուլում արդյունավետ է աշխատել բոլոր երեխաների հետ միաժամանակ՝ տարբեր ակտիվացնող միջոցներով (հարցեր, խաղեր, հանելուկներ, ցուցադրումներ, մտքերի փոխանակություն և այլն): Այս դեպքում իմաստալից, հիմնավոր, քննադատաբար ընկալման համար ամենաակտիվ դերը վերապահվում է երեխաներին: Նրանք պարապմունքի ընթացքում սկսում են ակտիվ մտածել, գիտակցել՝ օգտագործելով սեփական բառապաշարը:

Իմաստի ընկալում

Այս փուլում ամենակարևորը ներգրավման աստիճանը, հետքրքրությունը և եռանդը պահպանել կարողանալն է, որ ձեռք է բերվել խթանման ընթացքում: Երկրորդ կարևոր խնդիրը սովորողին օգնելն է վերահսկել սեփական ընկալումը, հատկապես, երբ նոր ինֆորմացիայի է հանդիպում: Օրինակ, լավ ունկնդիրը պատմվածքը լսելու ընթացքում չընկալելու կամ ոչ լրիվ ընկալելու դեպքում հարցեր է տալիս կամ պարզաբանումներ է ուզում ստանալ: Իսկ պասիվ սովորողները պարզապես անցնում են ընկալման այս ձախողումների վրայով, չեն նկատում իրենց իմացածի և նոր ինֆորմացիայի միջև եղած անհամապատասխանությունները, թերընկալումները:

Իմաստի ընկալման փուլում աշխատանքները կարելի է շարունակել ենթախմբերով:

Կշռադատման փուլ

Այս փուլի **առաջին կարևոր նպատակը** գիտելիքի հիմնավոր յուրացումն ու խորը ընկալումն է: Գոյություն ունեն մի քանի էապես կարևոր առաջադրանքներ, որ նպատակաուղղված են հատկապես կշռադատման փուլին: Դրանցից կարևորագույնն այն է, որ երեխաները սեփական բառերով արտահայտեն պարապմունքի ընթացքում հանդիպած նոր ինֆորմացիան և նոր հասկացությունները: Սա կարևոր է իմացական նոր կառույցի ձևավորման առումով: Ընկալածը սեփական բառերով ձևակերպելու ջանքերի շնորհիվ է, որ ընկալումը դառնում է խորը իմաստալից:

Կշռադատման փուլի **երկրորդ նպատակը** երեխաների միջև եռանդուն քննարկում ծավալելն է: Այն նպաստում է երեխաներիի շփմանը և հնարավորություն է ընձեռում հաղորդակցվել միմյանց հետ:Ձևավորվում է մթնոլորտ, որտեղ խրախուսվում է կարծիքների բազմազանությունը: Իսկ դա նպաստում է քննադատական և ճկուն մտածողության զարգացմանը:

Կշռադատման փուլում դաստիարակը պետք է կազմակերպի տարաբնույթ աշխատանքներ (բեմականացում, կառուցում, նյութի որևէ հատվածի պատկերում, կարծիքների փոխանակում և քննարկում, դիդակտիկ խաղ և այլն), որոնցով հնարավոր է վեր հանել պարապմունքի ընթացքում երեխաների ձեռք բերած գիտելիքները, հմտությունները, ինչպես նաև նրանց վերաբերմունքը կատարված աշխատանքներին:

Մանկավարժի համար դժվար չէ պարզապես հասկանալ ԽԻԿ համակարգի էությունը: Դժվարը ըմբռնածը մակերեսային մակարդակից խորքային մակարդակ տեղափոխելն ու լիովին յուրացնելն է: Ուստի անհրաժեշտ է նորից ու նորից կիրառել համակարգը՝ չմոռանալով, թե որքան կարևոր է այդ ընթացքում ուսուցման և ուսումնառության մասին խորհելը: Կարևոր է, որ մանկավարժը խորապես յուրացնի համակարգը, այնպես, որ այն դառնա ուսուցման մասին մտածելու ավտոմատ միջոց: Անհրաժեշտ են ժամանակ, համառություն, ինչպես նաև հանգիստ ու բարյացակամ մթնոլորտ:

Անհերքելի փաստ է, որ մեդիայից (այդ թվում՝ նոր թվային մեդիայից) օգտվողների տարիքային շեմը գնալով իջնում է: Շատ մասնագետների կարծիքովմեդիագրագիտության հիմքերը պետք է դնել հենց այն տարիքից, երբ երեխան սկսում է օգտվել մեդիայից: Ուստի երեխաներին պետք են ինֆորմացիոն միջավայրում կողմնորոշվելու, թվային աշխարհը հասկանալու, ժամանակակից մեդիա գործիքներից արդյունավետ և ապահով օգտվելու հմտություններ ու գիտելիք:

Քննադատական մտածողություն ձևավորող ու խթանող համակարգի կիրառումը նախադպրոցական հաստատությունների ուսումնական գործընթացում նպաստում է, որ սովորողների մոտ ձևավորվեն և զարգանան քննադատաբար մտածելու, հարցեր տալու, խնդիրներ լուծելու, իրավիճակները դիտարկելու և վերլուծելու, այլընտրանքային կարծիքներ քննելու, իրազեկ որոշումներ կայացնելու կարողությունները:

Հիշենք, որ քննադատաբար մտածողներն ավելի դժվար են ենթարկվում մանիպուլյացիաների և ունեն սեփական համոզմունքներ:

Համագործակցային ուսումնառության ռազմավարություններ

Ռազմավարություն	Դեմ առ դեմ շրջաններ
Նկարագրությունը	Այս ռազմավարությունը կարող է օգտագործվել պատահական խմբեր կազմելու համար: Այն բաղկացած է հետևյալ քայլերից. 1. Երեխաներին բաժանել երկու խմբի: 2. Առաջին խումբը շրջան է կազմում և շրջվում են 180°-ով այնպես, որ դեմքով կանգնեն շրջանից դուրս: 3. Երկրորդ խումբը մոտենում է և շրջան է կազմում առաջին խմբի շուրջը: Երեխաները կանգնում են իրար դիմաց: 4. Դաստիարակը հրահանգ է տալիս, որ 2 շրջաններն սկսեն պտտվել դեպի աջ (ստացվում է իրար հակառակ ուղղությամբ): 5. Երբ դաստիարակն ասում է՝ «Կանգ առ», երեխաները անմիջապես կանգնում են: 6. Երբ դաստիարակն ասում է՝ «Զույգ կազմիր», երեխաները զույգ են կազմում իրենց դիմաց կանգնած երեխայի հետ և զրուցում միմյանց հետ դաստիարակի առաջարկած թեմայի վերաբերյալ:
Ակադեմիական գործառույթը	• Տեղեկությունների ձեռք բերում • Հմտությունների կիրառում
Սոցիալական գործառույթ	• Ակտիվ ունկնդրում • Անմիջական փոխհարաբերություններ • Հարաբերությունների կառուցում հասակակիցների հետ
Տարբերակներ	**Կանգ առ, խումբ կազմիր -** Այս ռազմավարությունը օգտագործվում է ամփոփիչ հարցեր քննարկելու ժամանակ: Դաստիարակն ասում է 3 կամ 4, և երեխաները 3 կամ 4 հոգուց բաղկացած խմբեր են կազմում:

Ռազմավարություն	**Շրջիր, կանգ առ, զույգ կազմիր**
Նկարագրությունը	Այս ռազմավարությունը կարող է օգտագործվել պատահական և ընտրովի խմբեր կազմելու համար: Այն բաղկացած է երեք քայլերից. 1. Երեխաները շրջում են խմբում: 2. Երբ դաստիարակն ասում է «Կանգ առ», երեխաներն անմիջապես կանգնում են: 3. Երբ դաստիարակն ասում է «Զույգ կազմիր», երեխաները զույգ են կազմում իրենց ամենամոտ կանգնած երեխայի հետ և զրուցում են միմյանց հետ դաստիարակի առաջարկած թեմայի վերաբերյալ:
Ակադեմիական գործառույթը	• Տեղեկությունների ձեռքբերում • Հմտությունների կիրառում
Սոցիալական գործառույթը	• Ակտիվ ունկնդրում • Անմիջական փոխհարաբերություններ • Հարաբերությունների կառուցում հասակակիցների հետ
Տարբերակներ	**Շրջիր, կանգ առ, խումբ կազմիր -** Այս ռազմավարությունը օգտագործվում է ամփոփիչ հարցեր քննարկելու ժամանակ: Դաստիարակը ասում է «2+1», և երեխաները երեք հոգուց բաղկացած խմբեր են կազմում:
Կիրառություն	**Ընթերցանության համար.** Զույգերով քննարկել գրքի կերպարներին: **Բնագիտության համար.** Առանձնացնել ընտանի և վայրի կենդանիներ:

Ռազմավարություն	Խոսող փայտիկներ
Նկարագրությունը	«Խոսող փայտիկներ» ռազմավարությունը հիմնականում օգտագործվում է որպես հաղորդակցման կարգավորիչ՝ ընթացիկ ուսումնական առաջադրանքների ընթացքում: Այն բաղկացած է չորս քայլից. 1. Առաջադրանքի համար հատկացված ժամանակի վերաբերյալ ցուցումները տալիս է դաստիարակը: Նա յուրաքանչյուր խմբին նախօրոք հատկացնում է մեկ խոսող փայտիկ, որը դրված է լինում սեղաններին: 2. Դաստիարակը տալիս է հարցը: Երեխաներից մեկը վերցնում է փայտիկը և պատասխանում է հարցին: Առաջինը խոսում է այն երեխան, ում ձեռքին գտնվում է փայտիկը: Խմբի մյուս անդամները այդ ընթացքում չեն խոսում, չեն միջամտում և որևէ քննարկում չեն ծավալում: Իր միտքը ավարտելուց հետո երեխան փայտիկը փոխանցում է իր կողքի երեխային և այդպես շարունակում են այնքան, մինչև խմբի բոլոր երեխաները պատասխանում են դաստիարակի առաջադրած հարցին: Այդ երեխաները այլևս չեն կարող որևէ բան ասել, մինչև որ խոսելու հերթը հասնի բոլորին: 3. Երբ բոլորը խոսում, ավարտում են, փայտիկը դրվում է սեղանի մեջտեղում: 4. Դաստիարակի հաջորդ հարցից հետո ամեն ինչ նորից է կրկնվում:
Ակադեմիական գործառույթը	• Տեղեկությունների ներկայացում
Սոցիալական գործառույթը	• Հավասար մասնակցություն • Հերթով աշխատելու կարողություն
Տարբերակներ	**Չափված ելույթներ –** Խմբի անդամների խոսքը սահմանափակվում է մեկ րոպեով: Յուրաքանչյուր խմբից մեկը պետք է ժամացույցով հետևի այս պայմանի պահպանմանը:
Կիրառություն	**Ընթերցանություն.** Քննարկել մի պատմություն, ուր բոլոր երեխաների կարծիքները կարևոր կլինեն խմբի համար: **Մաթեմատիկա.** Մաթեմատիկական կանխատեսումներ անել և հիմնավորել դրանք: **Հասարակագիտություն.** Հիմնվելով ներկայացված փաստերի վրա՝ քննարկել և որոշել ուսումնասիրված կենդանիներից ո՞րն է ամենից նախընտրելին:

Հավելված 3.

Նկարներ











Օգտագործված գրականության ցանկ

1. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան. - Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
2. https://ontrening.ru/blog/samorazvitie/kak-uchitsja-vzroslym-effektivnost-obuchenija/
3. https://www.ispring.ru/elearning-insights/principy-andragogiki
4. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներ arlis.am/DocumentView.aspx?DocID=135903
5. https://escs.am/am/static/preschool-sdication?s=edu
6. **https://kznaknaxadprocakan.blogspot.com/**
7. **Նախադպրոցական միջին խմբի կրթական համալիր ծրագիր -միջին խումբ (4-5 տարեկաններ)**
8. **Նախադպրոցական ավագ խմբի կրթական համալիր ծրագիր**
9. Քննադատական մտածողության համակարգը ուսումնական ծրագրի ողջ համատեքստում, Ուղեցույց I, Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ, 1988
10. Քննադատական մտածողության խթանման մեթոդներ, Ուղեցույց II, Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ, 1988
11. Բացելով կախարդական դռները. կարդում և սովորում ենք երեխաների հետ միասին, Այա Թունա և Դոն Թանկերսլի, «Քայլ առ քայլ» ԲՀ, Երևան 2016
12. Մեդիագրագիտությունը նախադպրոցական կրթության մեջ, Հանրային լրագրության ակումբ, 2021
13. https://pjc.am/wp-content/uploads/2021/11/Chicken-Clicking-PJC.pdf
14. https://www.childnet.com/resources/smartie-the-penguin/
15. https://drive.google.com/file/d/1O3FYdRhX3r-pAQewdfiAc3wOOTscKskj/view